


ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ
ԽՈՇՈՐ ԿՈԼԽՈՋԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ



13.03.2013

26-391

334.6.63

5-28

14

Պրոլետարներ բոլոր յերկրներին, միացե՛ք

ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՅՍՈՎՈՒՄ ԵՆ

1. Ա. Անդրեյևիչ.— Մոցիալիստական շինարարության նոր եռասյուն 6 է.
2. Կուրբյևիչ.— Կուլակը կոլխոզի թշնամի 5 »
3. Գյուղատնտեսական կոմունայի կանոնադրություն 2 »
4. Սեայիև.— Պատասխան ընկեր կոլխոզնիկներին 5 »
5. Մ. Գիգոյան.— Կոլխոզների մասին 6 »
6. Վ. Խվանով.— Նոր եռասյուն 5 »
7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրություն 2 »
8. Կոնջ աշխատանքը կոլխոզում 8 »
9. Ա. Անդրեյևիչ.— Հյուս. Կովկ. գյուղատնտեսության սոցիալականացման խնդիրները 2 »
10. Կուլչիև.— Ինչպես կազմակերպել և վարել կաթնատնտեսությունը կոլխոզներում 8 »
11. Ա. Անդր.— Մոցիալիստական շինարարության գոտում 8 »
12. Հյուս. Կով. Յեքեր.— Ժախտադրածական միության դիմումը 2 »
13. Հիլըի Կենտկոմի աշխատանքը (ընկ. Վորոշիլովի ղեկավարումը) 15 »
14. Ա. Հովհաննիսյան.— յերգ մարտական փորձի (բանաստեղծություններ) 20 »
15. Հյուս. Կով. յերկրային 6 կուսակիցներինցիայի բանաձևերը 8 »
16. Զարգացրեք կենդանաբուծությունը կոլխոզներում 15 »
17. Յեգիպտացորենի կուլտուրան Հ. Կ. 6 »
18. Միկուլա.— Դեպի նոր կենցաղը կոլխոզներում 5 »
19. Սկամբոխով.— Պաշտպանեցեք անասուններին վարակումից 5 »
20. Պոլոզովսկի.— Առաջին ոգնություն հիվանդացած գյուղ. կենդանիներին 6 »
21. Հնգամյակի յերրորդ տարվա շնորհ 16 »
22. Գյուղատնտեսական միասնական հարկը և դ. տ. ծոց. վերակառուցումը 10 »
23. Յա. Յելնով.— Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսությունը և նրա վարչությունը 1-ին պրակ 8 »

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

1. Հյուսիս. Կովկ. հայ պրոլետարոզներից՝ Աշոտ Լուսենցի բանաստեղծությունները
2. Հյուս. Կովկ. հայկ. պրոլետարոզների ասոցիացիայի անդամների դրվածքները
3. Ինչպես կազմակերպել խոշոր կոլխոզի տնտեսութ. և նրա վարչությունը—3-րդ պր.
4. 16-րդ կուսամաստեղծարի արդյունքները
5. Հյուսիսային Կովկասի հնգամյակը.— արդյունքներություն
6. Խոզաբուծության կազմակերպումը կոլխոզում
7. Կերի հարցը և սիլոսացումը
8. Կենդանաբուծության ավագ բանվորների պարտականությունները
9. Ձիանարկ ծխախոտադրածության համար
10. Ճագարաբուծություն
11. Թռչնաբուծություն
12. Աշխատանքի կազմակերպումը յիվ յեկամաների բաժանումը կոլխոզում Լավագույն կոլխոզների փորձը Հյուս. Կովկասում
13. Տրանսպորտը և կալսիչը. տեխնիկական ձեռնարկ
14. Կոմսոմոլը և կուսակցության խնդիրները

Իրինկ. Ростов н-Д., Буденовский пр., 60, Крайнациздат,

ՅԱ. Ա. ՏԵԼՆՈՎ

185 JAN 2010

ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ ԽՈՇՈՐ ԿՈԼԽՈԶԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ

Պ Ր Ա Կ Ո .

Թարգմ. Տ. Խ.

ԱԶԳԱՅԻՆ ՓՈԳՐԱՄԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԾԵՐԿՐԱՅԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ



ԽՈՍՏՈՎ. ԴՈՎ.

1930 թ.

12586 - 52

Я. А. ТЕЛЬНОВ

Как организовать хозяйство крупного колхоза и управление им

Выпуск II.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՄԵՔԵՆԱՅԻ ԴԵՐԸ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություն կառուցելու համար հիմք է հանդիսանում մեքենա-տրակտորային բազան: Առանց այդ բազայի անհնարին է կառուցել խոշոր, լավ կազմակերպված տնտեսություն: Խոշոր մեքենան գյուղատնտեսական արտադրության և արտադրողների համար ամուր շաղկապող ողակ է հանդիսանում: Ժամանակակից կատարելագործված տեխնիկան գյուղատնտեսական արտադրության մեջ միացնում է մարդկանց և վստահելի հիմք է տալիս գյուղատնտեսական խոշոր արտադրության համար: Չի կարելի լավ զարգացած, խոշոր կոլեկտիվ տնտեսություն կառուցել յետամնաց տեխնիկական բազայի վրա: ձիերի, յեզների և մանր-գյուղատնտեսական ինվենտարի հիման վրա: Յեթն մենք կունենանք այդպիսի կոլտոգներ, ապա ճիշտ մինչև այն ժամանակ, յերբ վոր մենք կարող կլինենք խոշոր գյուղատնտեսական ձեռնարկության տակ ստեղծել համապատասխան տեխնիկական բազա: Խոշոր մեքենան պետք է վերջնականապես միացնի իր շուրջը արտադրողներին և հաստատուն կերպով ամրապնդի գյուղատնտեսական խոշոր արտադրությունը: Այդ պատճառով մեքենա-տրակտորային տնտեսության կազմակերպման հարցերը առաջնակարգ նշանակություն են ստանում:

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵ- ՆԱՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Մեքենա-տրակտորային տնտեսության մեքենաների կազմի մասին պատկեր կարող են ներկայացնել հետևյալ տվյալները:

Я. А. ТЕЛЬНОВ

Как организовать хозяйство крупного колхоза и управление им

Выпуск II.

НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КРАЙНАЦИЗДАТ

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

ՄԵՔԵՆԱՅԻ ԴԵՐԸ ԽՈՇՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություն կառուցելու համար հիմք է հանդիսանում մեքենա-տրակտորային բազան: Առանց այդ բազայի անհնարին է կառուցել խոշոր, լավ կազմակերպված տնտեսություն: Խոշոր մեքենան գյուղատնտեսական արտադրության և արտադրողների համար ամուր շաղկապող ողակ է հանդիսանում: Ժամանակակից կատարելագործված տեխնիկան գյուղատնտեսական արտադրության մեջ միացնում է մարդկանց և վստահելի հիմք է տալիս գյուղատնտեսական խոշոր արտադրության համար: Չի կարելի լավ զարգացած, խոշոր կոլեկտիվ տնտեսություն կառուցել յետաձևաց տեխնիկական բազայի վրա, ձիերի, յեղների և մանր-գյուղատնտեսական ինվենտարի հիման վրա: Յեթե մենք կունենանք այդպիսի կոլխոզներ, ապա ճիշտ մինչև այն ժամանակ, յերբ վոր մենք կարող կլինենք խոշոր գյուղատնտեսական ձեռնարկության տակ ստեղծել համապատասխան տեխնիկական բազա: Խոշոր մեքենան պետք է վերջնականապես միացնի իր շուրջը արտադրողներին և հաստատուն կերպով ամրապնդի գյուղատնտեսական խոշոր արտադրությունը: Այդ պատճառով մեքենա-տրակտորային տնտեսության կազմակերպման հարցերը առաջնակարգ նշանակություն են ստանում:

ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՔԵ- ՆԱՆԵՐԻ ԿԱԶՄԸ

Մեքենա-տրակտորային տնտեսության մեքենաների կազմի մասին պատկեր կարող են ներկայացնել հետևյալ տվյալները:

Ագրոնոմ Մառնիկին 50 հազար հեկտար վտրեւհողի տարածութիւն սպասարկող մեքենա-տրակտորային կայանի համար նախատեսուած և հետեւյալ ինվենտարը և սարքավորումը:

№№		Քա- նակը	Գումարը ռուբ.
1	Տրակտորային գարնիտուրներ 3 կորպուսանի կարողութեան	225	450000
2	Կալսելու մեքենաներ 10 ուժ. ճգմիչներով	70	280000
3	Սորտիրովիաներ	70	7000
4	Տրեյերներ (սերմնազտիչ մեքենաներ)	20	10000
5	Խուրճակայաններ (10 փթանոց)	80	48000
6	Հնձող մեքենաներ	250	45000
7	Ցաքաններ «Զիգ-Զագ» (ողակավոր)	660	14250
8	Կուլտիվատորներ—9 թաթանոց	300	16200
9	Գուլթաններ 8 խոփանոց	200	27000
10	Շարքացան—19 շարքանի	250	50000
11	Տեղափոխման համար հրապարակներ	280	140000
12	Շարժվող վագոններ	50	20000
13	Ջրկիրներ	50	5000
14	Վառելանյութ պահելու համար ցիստերն	—	6000
15	Յերկաթե տակառներ վառելանյութ տեղափոխելու համար	400	14000
16	Բեռնակիր մեքենաներ	10	16000
17	Մարդատար ավտո-մեքենաներ	5	10000
18	Այլ և այլ մանր ինվենտար	—	20000
Ընդամենը			800000

Ինվենտարի այս կազմը ստանդարտային չէ:

Մեր գյուղատնտեսութեան մեջ արագ տարածվող տեխնիկան կարող և զգալի փոփոխութիւններ առաջ բերել մեքենաների ցույց տրելով և կազմի մեջ. Որինակ, կոմբայնի գործածութիւնը շատ կկրճատի պահանջվող կալսելու և քաղհանի մեքենաների թիվը: Տրակտորի յետի վից կցվող խոշոր մեքենաները, որինակ, 24-դիսկանոց շարքացանները, 10 փուլանոց խուրճակապերը կարող են բոլորովին դուրս քշել գործածութիւնից ավելի մանր ինվենտարը: Սակայն այդ խոշոր ինվենտարի պակասութեան պայմաններում անրաժեշտ և մեծագուշտ խնայողութեամբ ոգտադործել այն, ինչ վոր ունի բնակչութիւնը: Տրակտորի յետի վից մի քանի մեքենաներ կցելով, կարելի յի նաև ոգտադործել բնակչութեան մոտ յիգած ինվենտարի մեծ մասը: Որինակ, տրակտորին

կարելի յի կցել մի քանի հասարակ ձիու շարքացան, հնձելու մեքենաներ և այլն:

Բերենք մեքենա տրակտորային տնտեսութեան մեքենաների կազմի մի քանի որինակներ ևս:

Հացահատիկային սովխոզ «Գիգանտ»-ը, Սալսկի շրջանում, 1929 թվի նոյեմբեր ամսում ունեւ տրակտորների և ինվենտարի հետեւյալ կազմը.

1. Տրակտորներ «Ինտերնացիոնալ» սիստ. 10—20 ույժ. 99 հատ.	
» » » 15—30 ույժ. 170 »	
» «Զոն-Դիր» սիստ. 17—27 ույժ. 25 հատ.	
» «Կլետրակ» » 40—55 ույժ. 61 հատ.	
» «Ոյլ-Պոյլ» » 25—40 » 10 »	
» » » 30—60 » 33 »	
» «Շտոկ» » 12—24 » 7 »	
» «Շտոմպոր» » — — » 2 »	

Ընդամենը 407

1. Գուլթաններ 3 կորպուսանի	187 հատ
2. » 4 կորպուսանի	248 հատ
3. Դիսքավոր ցաքաններ	214 »
4. Ատամնավոր » «Լինա»	1114 »
5. » « «Զիգ-Զագ»	1587 »
6. Կուլտիվատորներ	71 »
7. Տրակտորային շարքացաններ	256 »
8. Խուրճակայաններ	190 »
9. Կալսելու մեքենաներ	31 »
10. Կոմբայններ	25 »
11. Զտիչ մեքենաներ «Նեյգաուզ»	12 »
12. Թիթե ավտո-մեքենաներ	18 »
Բեռնակիր ավտոներ	42 »
Դաշտային վագոնիկներ	97 »
Հետսենյան վրաններ	24 »
Վագոն-արհեստանոցներ	17 »

Հացահատիկային սովխոզը 1928-29 թվին ունեւ 60 հազար հեկտար ցանքա: 1929 թվի աշնանը արավ 35 հազար աշնանացան և 80 հազար հեկտար ցել վարեց, վորը աշնանացանի հետ միասին կկազմի 115 հազար հեկտար:

Այդպես ե խոշոր մեքենայի ուժով գյուղատնտեսութեան մեջ:
«Մեյատեի» կոմունան (Սալսկի շրջանում), վորը առաջինը կանգ-
նեց գյուղատնտեսական արտադրութեան մեքենայացման ուղու վրայ,
իր մեքենա-տրակտորային տնտեսութեան մեջ ունի ինվենտարի հետե-
վյալ կազմը.

Տրակտորներ «Բիստ» . . .	30—60	ուժ.	3
» «Կեյս» . . .	20—40	»	1
» «Ռումբլի» . . .	35—60	»	2
»	15—25	»	1
» «Փորզոն» . . .	10—20	»	14
» Պրոպանիների մշակման համ.			2

Կ Ց Ե Լ ՈՒ Մ Ե Ք Ե Ն Ա Ն Ե Ր

Գութան 8 խովանի	2	հատ
» 6 »	4	»
» 4 »	1	»
» 3 »	1	»
» 12 դիսկանոց	1	»
Դիսկավոր ցաքան	9	»
Կուլտիվատոր 2 շարքանի . . .	5	»
Զսպանակավոր ցաքաններ . . .	10	»
Յերկաթե ցաքաններ	20	»
Հասարակ շարքացան	13	»
Յեզիպտացորենի շարքացան . . .	1	»
Կարտոֆիլ ցանելու մեքենա . . .	1	»
Խուրձկապ	22	»
Կալսելու մեքենաներ	3	»
Կոմբայներ	1	»
Յեզիպտացորենի կալսելու մեքենա	1	»
Խոտհարքի մեքենա	13	»
Փոցիս	7	»
Դեզ կազմող մեքենա	1	»
Սիլոս կտրելու մեքենա	2	»

Տրակտորների և մեքենաների տեսակների բազմազանությունը
չափազանց անշահավետ ե տրակտորային տնտեսութեան համար, վո-

րովհետեւ դա բարդացնում ե տրակտորների և մեքենաների խնամքը և
նրանց հետ վարվելը, ապա նաեւ նրանց պահեստի մասեր մատակա-
րարելը և վերանորոգելը:

Վորպես կանոն, մեքենա-տրակտորային տնտեսութեան մեջ պետք
ե ձգտել միատիպ մեքենաներ գործածել: Դա շատ հեշտացնում ե մե-
քենա-տրակտորային տնտեսությունը վտրելը:

Վորոշ տարբերությունը ոգտակար կարող ե լինել միայն տրակ-
տորների վերաբերյալ: Բայց այդ դեպքում ես տրակտորների հիմնա-
կան կազմը պետք ե մեկ մարկայի լինի: Միայն ծանր աշխատանքներ
կատարելու համար, որինակ՝ խալոզի ալգու հողը հերկելու, բազմամյա
աբոտների տակի անմշակ հողը հերկելու համար, կարելի յե ունենալ
մի քանի ուրիշ տրակտորներ: Նույնպես և թեթեւ աշխատանքների հա-
մար պետք ե ունենալ մի քանի թեթեւացրած տիպի տրակտորներ: Թե
առաջինների և թե յերկրորդների քանակը պետք ե ճիշտ համարված
լինի, նրանց կատարած աշխատանքների համապատասխան:

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

Տնտեսութեան մեջ պահանջվող տրակտորների և նրանց կցելու
մեքենաների քանակը տնտեսութեան կազմակերպիչները ամեն բոպե
կարող են հաշվի առնել:

Դրա համար պետք ե իմանալ մեքենայի արտադրողականությու-
նը, նրա կատարելիք աշխատանքի ծավալը և այդ աշխատանքի կա-
տարման համար անհրաժեշտ բանվորական որերի թիվը:

Պարզենք այդ որինակով: Յենթադրենք, վոր մենք մի խոշոր կու-
խողում ունենք 10.000 հեկտար վարելու հարմար հող: Յեվ յենթա-
դրենք, վոր մենք ընդունել ենք հետեյալ 5-դաշտյա ցանքաշրջանը.
1) զբաղված (վիկա, հաճար և այլն), 2) աշնանացան ցորեն, 3) պրո-
պանի կուլտուրաներ, 4) աշնանացան, 5) գարնանացան հացահատիկ-
ներ: Այդպիսի ցանքաշրջանով մենք կունենանք զանազան կուլտու-
րաներով զբաղված հետեյալ տարածությունները. զբաղված ցել—2000
հեկտար, աշնանացան—4000, գարնանացան—2000 և պրոպանի—2000
հեկտար:

Գյուղատնտեսական տարին ընդունված ե բաժանել չորս ժամա-
նակաշրջանի. 1-ին շրջանն ե՝ գարնանայինը—գարնան ցանքսի սկզբից
մինչև վերջը, 2-րդ շրջանն—գարնանացանքսի վերջից մինչև բերքի
ավաքման սկիզբը—մինչ հավաքման կամ միջցելյան (муждупарье)

2-րդ շրջան, 3-րդ շրջանն է—հացահատիկների բերքի հավաքման սկզբից մինչև վերջը—բերքի հավաքման շրջանը, 4-րդ շրջանն է—հացահատիկների բերքի հավաքման վերջից մինչև դաշտային աշխատանքների վերջը,—աշնանային շրջան: Մեղ կարևոր է իմանալ, թե քանի որ կունենանք այդ շրջաններից ամեն մեկում: Յենթադրենք, վոր հանգստի և աշխատանքի համար անբարենպաստ որերը դուրս բերելուց հետո, մենք ամեն մի շրջանում ունենք բանվորական որերի հետևյալ քանակը. 1-ին շրջանում—20 որ, 2-րդում—17, 3-րդում—15 և 4-րդում—75. Յենթադրենք, վոր բոլոր հիմնական գյուղատնտեսական աշխատանքները, այսինքն հերկումը, ցաքանիլը, փխրացնելը, բերքի հավաքումը և ցանքը—պիտի կատարենք տրակտորներով: Մնացած բոլոր աշխատանքները կատարվելու յեն կենդանի լծկան ույժով:

Այժմ մեզ անհրաժեշտ է պայմանավորվել, թե վո՞րպիսի արտադրողականութամբ մեքենաներից մենք պիտի յենենք:

Փորձը մեղ տալիս է 10 ժամյա բանվորական որվա ընթացքում 10-20 ձիու ույժի «Ինտերնացիոնալ» տրակտորի արտադրության հետևյալ չափերը.

3 կորպուսանի դութանով հերկումը—3 հեկտար:

4 կաղմանի դիսկավոր ցաքանով ցաքանիլը—8 հեկտար:

9 կորպուսանոց դութանով փխրացնելը—8 հեկ.

24 (դիսկավոր) շարքացանով ցանիլը—12 հեկտ.

2 իրար կցված խուրձկապով բերքի հավաքումը—16 հեկտ.

Մեր ընդունած ցանքաշրջանի ժամանակ դանադան շրջաններում մեղ պետք կլինի կատարել հետևյալ աշխատանքները.

1 շրջան. ցաքանիլ պրոպաշինների համար 2000 հեկտար և 6000 հեկտար տարածություն ցելի վրա ցանիլ դարնանացան հացահատիկներ, պրոպաշիններ և խոտեր:

Այդ աշխատանքները կատարելու համար կ'պահանջվի՝ 250 տրակտորի-որ (2000 : 8) ցաքանիլու և 250 ցաքանի որ, ցանքսի համար—500 տրակտորի-որ և 500 շարքացանի որ: Ընդամենը հարկավոր է 750 տրակտորի որ: Մեքենաների որերի պահանջվող քանակը բաժանելով ժամանակաշրջանի բանվորական որերի թվի վրա—այսինքն 20-ի վրա,—մենք կ'ստանանք մեքենաների պահանջվող քանակը: Այդպիսի հաշվառքի համաձայն, 1 ին շրջանում մեղ անհրաժեշտ են 37 տրակտորներ, 13 դիսկավոր ցաքանիլ, 25 շարքացան:

2-րդ շրջան. Հացահատիկների բերքի հավաքումից առաջ մեղ պետք կ'լինի 2000 հեկտար հող հերկել ցելի համար: Դրա համար կպահանջվեն—2000 : 3 = 666 տրակտորի որ: Բաժանելով այդ թիվը ժամա-

նակաշրջանի բանվորական որերի թվի վրա, այսինքն 17-ի վրա, մենք կ'ստանանք տրակտորների պահանջվող քանակը, այսինքն 39 հատ և նույնքան էլ դութաններ:

3-րդ շրջան. Պետք է հավաքել 6000 հեկտար աշնանացան և դարնանացան կուլտուրաների բերքը և աշնանացան կուլտուրաներից ազատված 2000 հեկտարը փխրացնել դարնանացանի համար: 6000 հեկտար հացահատիկների բերքի հավաքման համար կ'պահանջվի 375 տրակտորի որ (6000 : 16) և յերկու անգամ ավելի խուրձկապի որ (ամեն մի տրակտորին կցվում է 2 խուրձկապ): 2000 հեկտար փխրացնելու համար պահանջվում է 250 տրակտորի որ (2000 : 8) և նույնքան փխրացուցիչ (пушчитель) աշխատանքի որ: Բաժանելով մեքենաների պահանջվող որերի թիվը ժամանակաշրջանի բանվորական որերի թվի վրա, այսինքն 15-ի վրա, կ'ստանանք մեքենաների հետևյալ պահանջը.—41 տրակտորներ, 17 փխրացնող մեքենաներ և 50 խուրձկապ:

4-րդ շրջան. Դարնանացանի, պրոպաշինների և զբաղված ցելերի համար պետք է հերկել 6000 հեկտար, աշնանացանի համար 2 անգամ փոցելի պրոպաշիններից ազատված դաշտը, այսինքն 4000 հեկտար և աշնանացան հացահատիկներով ցանիլ 4000 հեկտ.:

Տրակտորի որեր կ'պահանջվեն.—հերկելու համար 2600, ցաքանիլու համար—500 և նույնքան ցաքանի որ, ցանիլու համար 333 և նույնքան շարքացանի որ, իսկ ընդամենը տրակտորի որ կ'պահանջվի 2833: Ընդունենք, վոր 4-րդ շրջանում տրակտորի աշխատանքի ժամանակամիջոցն է 75 որ, ցաքանիլու ժամանակամիջոցը 25 որ և աշնանացանի ժամանակամիջոցը—15 որ: Այդ դեպքում կ'պահանջվին հետևյալ թվով մեքենաներ. 38 տրակտորներ, 20 դիսկավոր ցաքան, տրակտորին կցելու 22 շարքացան:

Ավելի պարզ լինելու համար կարգով դուրս գրենք մեղ պահանջվող մեքենաների և տրակտորների թիվը ըստ ժամանակաշրջանների.

	Տրակտորներ	Դիսկավոր ցաքանիլ	Փխրացնող մեքենաներ	Շարքացաններ	Խուրձկապներ	Տրակտոր դութան
I ժամանակաշրջան	37	13	—	25	—	—
II »	39	—	—	—	—	39
III »	41	—	17	—	50	—
IV »	38	20	—	22	—	38

Պարզ եւ, վոր աշխատանքները ժամանակին կատարելու համար տնտեսութեան մեջ պետք ե ունենալ այնքան մեքենաներ, վորքան ներքին եւ արտաքին աշխատանքի ամենալարված շրջանում: Մեր ուրինարէի համար մենք պիտի ունենանք տրակտորների եւ մեքենաների հետեւի վալ քանակը: 41 տրակտոր, 20 դիսկավոր ցաքան, 17 փխրացնող մեքենա, 25 շարքացան, 50 խուրձկապ եւ 39 տրակտորի գութան:

Յեթի բնակչութեան մոտ ավելի մեծ քանակութեամբ հնձելու մեքենաներ լինեն, մենք հաջողութեամբ կարող ենք նրանցով փոխարինել խուրձկապների կեսից վոչ պակասը: Ամեն մի 2 հնձելու մեքենան կարող եւ փոխարինել մի խուրձկապ: Այդ դեպքում մեզ անհրաժեշտ կլինեն 25 խուրձկապ եւ 50 հնձելու մեքենա:

Այդպես եւ սովորաբար լինում եւ, վոր տրակտորին կցվող մեքենաների թիվը տրակտորների թվի վերաբերմամբ կտրուկաբար փոքանայնի եւ փխրացնողները—մինչեւ 50 տոկոս, խուրձկապները եւ շարքացանները—մինչեւ 70 տոկոս:

Մեր բերած որինակներում, յերբ տրակտորը կատարում եւ հիմնական դաշտային աշխատանքները (մենք չենք վերցնում ցաքաններ, կալիքներ եւ այլն), տրակտորի վրա ընկնում եւ 250 հեկտար վարելահող: Ազգրոնոմ Մարկելիչը գտնում եւ, վոր 6 դաշտային ցանքաշրջանի ժամանակ (ցել, աշնանացան, գարնանացան, պրոպաշնի, աշնանացան եւ գարնանացան) մի տրակտորը 12-ժամյա միջին բանվորական որով կարող եւ կատարել բոլոր աշխատանքները 220 հեկտար վարելահողի տարածութեան վրա:

Նենց այս թվերով եւ մենք առաջարկում ենք ոգտովել պահանջվող տրակտորների եւ նրան կցվելիք ինվենտարի քանակը հաշվի առնելիս: Պետք ե ի նկատի ունենալ, վոր մեր հաշիվների ժամանակ մենք յեւնում ենք 10 ժամյա բանվորական որվանից: Մինչդեռ ներկայումս մեքենա-տրակտորային տնտեսութեան ունեցող բոլոր կոլխոզներն աշխատում են 2—3 հերթի, որիկան 16—20 ժամ: Այդ դեպքում տրակտորների եւ մեքենաների որական արտադրողականութեանն աճում եւ համարյա 2 անգամ եւ միևնույն հողային տարածութեան համար պահանջվում են 2 անգամ պակաս քանակութեամբ տրակտորներ եւ մեքենաներ:

Տրակտորների եւ նրանց կցվող ինվենտարի սուր պակասութեան պայմաններում անհրաժեշտ ե ամենալրիվ կերպով ոգտագործել այդ մեքենաները: Որական 2 հերթի աշխատելով, հիմնական դաշտային աշխատանքները—հերկելը, ցաքաններ, փխրացնելը, ցանքսը եւ բերքի հավաքումը—կատարելու պայմանով 400 հեկտար վարելահողը տրակտորի համար բոլորովին ունալ բեռնվածութեանն ե:

Խոշոր կոլխոզների կազմակերպիչների խնդիրն ե՝ 1931 թվականի ընթացքում այդպիսի բեռնվածութեանն տալ տրակտորին:

Ներկայումս, քանի տրակտորների թիվը բավական չեւ, անհրաժեշտ ե տրակտորն ոգտագործել ամենաժամանակաշատ աշխատանքների վրա, իսկ փնացած աշխատանքները հարկավոր ե կատարել կենդանի լծկան ուժով:

ՇԵՆՔԵՐ ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

Մեքենա-տրակտորային տնտեսութեանը պահանջում եւ, վոր համապատասխան կերպով դրված լինի վերանորոգման գործը: Խոշոր մեխանիկական արհեստանոցի կազմակերպումը թանգ ե նստում: Այդպիսի արհեստանոցի շենքը—700 քառ. մետր ոգտակար տարածութեան վրա նստում ե 40,000 ռուբլի ե կահավորումը մեխանիկական, վերանորոգման գործման արհեստանոցներով, հյուանոցով, դարբնոցով ե ձուլարանով—70,000 ռ., ընդամենը—110,000 ռուբլի: Խոշոր կոլխոզների մեծամասնութեան համար այդպիսի ծախսը նրանց կարողութեանից բարձր եւ, Հիմնական վերանորոգման համար պետք կլինի այնուամենայնիվ տրակտորները հանձնել պետական ե կոոպերատիվ արհեստանոցներին: Սակայն ընթացիկ ե թեթեւ նորոգումների համար ամեն մի կոլխոզին անհրաժեշտ ե ունենալ թեկուզ ստանդարտային, ֆորդի արհեստանոցը 4000 ռուբլու արժողութեամբ: Այդ արհեստանոցի համար կարելի յե կամ յեղած շենքերից մեկը հարմարեցնել, կամ ծայրայեղ դեպքում կառուցել նորը: Պահանջելով 100—120 քառ. մետր, ոգտակար տարածութեան, այդպիսի արհեստանոցի կառուցումը կնստի 3500—4000 ռուբլի:

Նորոգման կազմակերպման համար անհրաժեշտ ե նախ ե առաջ ոգտագործել տեղում յեղած հնարավորութեանները: Արհեստանոցի համար սպասարկող պերսոնալ ընտրելը նույնպես խոշոր կոլխոզի կազմակերպիչների ամենալրիվ խնդիրներից պետք ե լինի:

Կոլխոզի մեքենա-տրակտորային պարկի համար պետք ե կառուցվի հատուկ դեպո:

Համապատասխան ինվենտարի կազմով մի տրակտորին պահանջվում ե 20—25 քառ. մետր: Կառուցվածքի մի քառակուսի մետրի արժեքը 15 ռուբլի համարելով, կգտնենք, վոր համապատասխան ինվենտարով 40 տրակտորի համար կառուցվածքը կնստի մոտավորապէս 15,000 ռուբլի:

ՎԱՌԵԼԱՆՅՈՒԹԻ ՊԱՇԱՐՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՀԱՆՁՐ

Առանձնապես կարևոր նշանակություն ունի տրակտորներին ժամանակին և անընդհատ վառելանյութի և յուղ մատակարարելը: Դրա համար կոլխոզում վառելանյութի պաշար պահելու համար պահեստ պետք է կազմակերպվի: Պաշարը պետք է լինի ըստ հնարավորության յերկար ժամանակվա և համեմատյալ պահվող շաբաթից վոչ պակաս և պետք է կազմակերպվի վառելանյութի մշտական մատակարարումը «Նեֆթսինդիկատի» կամ ուրիշ կազմակերպությունների ամենամոտ թաղանթից: Կոլխոզը պետք է ապահովի իրեն համապատասխան ամանեղենով: Դրա համար ամենահարմարն են վինտավոյ փականերով յերկաթյա տակառները:

Վառելանյութի պահանջը կարելի չէ հեշտությամբ հաշվի առնել, յեկներով «Մ. Ինտերնացիոնալ» տրակտորի մի հեկտարի վրա կատարած աշխատանքի ժամանակ ծախսած վառելանյութի հետևյալ չափերից.

Հողի հերկումը գութանով, 13 սանտիմ. խորությամբ	17—20	կիլո
Գոշ հողերի ցաքանիլը 4 մարտկոցային դիսկավոր ցաքանով	10	»
Ցաքանիլը—8—2 ողակային «Զիգ-Զագ» ցաքանով	6	»
Ցանքը—23 դիսկավոր շարքացանով	5	»
Բերքի հավաքումը 3 մետրի վրա հնձող խուրձկապներով	4,5	»
Հավաքումը հունձի մեքենաներով (3 հունձի մեքենա)	3,7	»
Մուրճերը կալսի մեքենայի մոտ բերելը 2 կլմ. տրամագծի վրա 2,2	»	

Յուղը ծախսվում է ծախսված նավթի 8 տոկոսի չափ, իսկ բենզինը—2 տոկոսի չափ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

Տրակտորների ճիշտ տեխնիկական խնամքի համար ամեն մի տըրակտորի վրա անհրաժեշտ է ունենալ 3 դեկավար (рулевой) Ղեկավարը պետք է իմանա արակտորը վարել, պետք է գիտենա և իմանա վորոշել մոտորի նորմալ թրխկոցը աննորմալից: Անընդհատ տեխնիկական հսկողություն և ընթացիկ վերանորոգման համար ամեն մի 10 տրակտորին անհրաժեշտ է ունենալ ավիլի վորակյալ աշխատողների կազմ—ավագ տրակտորիստներ կամ այսպես կոչված՝ բրիգադիրներ:

Ամբողջ տրակտորային պարկը սովորաբար յենթարկվում է գործը լավ գիտեցող մեխանիկին:

ԲՐԻԳԱԴՆԵՐԸ

Ամբողջ մեքենա-տրակտորային պարկը դաշտային աշխատանքների համար բաժանվում է մի շարք ջոկատների կամ բրիգադների: Յուրաքանչյուր բրիգադը, ըստ նրա կատարելիք աշխատանքի բնույթի և ծավալի, լրացվում է տրակտորների և մեքենաների համապատասխան կազմով: Բրիգադները կարող են լինել մեծ կամ փոքր: Այդ տեսակետից վճռական դերը սովորաբար պատկանում է մեքենա-տրակտորային պարկին և մշակվելիք տարածություն մեծության:

Այսպես, որ., «Դիգանտ» հացահատիկային սովխոզում 1929 թվի դարնանը բրիգադի միջին կազմը հետևյալն էր.

	Մեքենաների թիվը	Բանվորների թիվը
Տրակտորներ	40 հատ	80
Դիսկավոր ցաքան	30 »	60
Ատամնավոր »	190 »	—
Տրակտորային շարքացաններ	18 »	36

Խոշոր կոլխոզներում, սակայն, նրանց մեքենա-տրակտորային պարկի աննշանության պատճառով, տեղ ունեյին մանր բրիգադները, որինակ.

	Մեքենաների թիվը	Բանվորների թիվը
Տրակտորներ	5	10
Դիսկավոր ցաքաններ	2	4
Ատամնավոր »	8	2
Շարքացաններ	2	4

Բրիգադում 10-ից պակաս տրակտորներ չպետք է լինեն, վորովհետև ավիլի պակաս թվով տրակտորների համար առանձին բրիգադիր ունենալու միտք չկա:

Ցելի վարելահող լինելու դեպքում կարող են կազմվել առանձին բրիգադներ, ցաքանիլու և ցանելու համար և ուրիշները՝ հերկելու, ցաքանիլու և ցանելու համար: Աշխատող բրիգադներից մի քանիսը կարող են ցանել, իսկ մնացածները հերկել ցելի համար:

Բրիգադը դաշտային աշխատանքների ամբողջ ընթացքում դաշտում է գտնվելու: Վորոշ տեղերում սարքվում է կոշ, վրանից կաշարժական վագոնից բնակարան և շինվում, վառարան (կամ շարժական խոհանոց) և յեռանոց և կահավորվում: Առանձին տեղ է հատկացվում

վառելանյութերի և յուղային նյութերի համար տրակտորները և նւրանց կցվող ինվենտարը կտնգնեցնելու տեղ և ընտրվում:

Աշխատանքը սովորաբար կատարվում է գիշերը և յերեկը—2-3 հերթի: Յերթ մեկ բրիգադն աշխատում է, մյուսը նույն ժամանակ հանգստանում է հենց այնտեղ, կոշում:

Աշխատանքը կամ ամբողջ ջոկատով և կատարվում, յեթե տրակտորները իրար յետևից են գնում, կամ ամեն մի տրակտորը ստանում է առանձին հրահանգ-ծրագիր: Զոկատներով աշխատանքը և այսպես կոչված՝ ձևավոր հերկումը, հնարավոր է այն պայմանով, յեթե տրակտորների վրա աշխատում են իրար լավ հարմարվող տրակտորիստներ: Այլ կերպ առաջից գնացող մեկ տրակտորի կանգնելը ընդհատում է բոլոր տրակտորների աշխատանքը: Ֆիզուրային աշխատանքի (հերկման) ժամանակ տրակտորի շրջադարձի տեղերում ստացվում են ճառագայթաձև հեռացող չհերկված տեղեր, իսկ հողամասի կենտրոնում մնում է կտրտված, վատ մշակված փոքրիկ տարածությունը: Այդպիսի հերկման թերություններից պետք է համարել նաև այն, վոր ամեն մի տրակտորի տրտադրողականությունը հաշվառւն անհնարին է:

Այդ պատճառով շատ կոլխոզներ աշխատանքի ուրիշ ձև են գործադրում, այսինքն՝ ամեն մի տրակտորը ստանում է բրիգադիւրից 10 ժամյա բանվորական որվա ԴՍԱԼ՝ (հրահանգը): Մշակվելիք տարածությունը նշանակվում է ցցված ձողերով: Շուու տված, պառկեցրած ակոսների քանակը պակասեցնելու համար տրակտորների մի մասը հերկում է պառկեցրած, իսկ ուրիշները շուու տված ակոսներով: Նույնպիսի կարգով կարելի է կատարել նաև ցանքսը, ըստ վորում շարքացաններին հարկավոր է մատակարարել համարիչներ:

Աշխատանքները այդպես կազմակերպելով, հնարավոր է ճիշտ հաշվի առնել ամեն մի տրակտորի աշխատանքը և տրակտորիստների միջև կարելի է սոցիալիստական մրցում կազմակերպել: Ամեն մի տրակտորին պետք է կցել մշտական տրակտորիստներ և նրանց պատասխանատու դարձնել տրակտորի համար:

Բրիգադիւրը պարտավոր է ամեն որ հաշվի յենթարկել ամեն մի տրակտորի աշխատանքը: Ամեն մի տրակտոր ունի իր համարը և իր ամեննորյա քարտը, վորի միջ նշանակվում է աշխատանքի տեսակը, նրա վորակը և քանակը, աշխատանքի ժամերի քանակը, ծախսված վառելիքի և յուղանյութերի քանակը, տեղի ունեցած դադարների ժամանակը, պատճառները: Քարտերը հանձնվում են կոլխոզի գրասենյակին: Այդպիսի կարգը ընտելացնում է տեխնիկական աշխատողներին կար-

գապահություն և մեքենային ու վառելանյութերին խնայողական վերաբերմունքի: Իսկ կոլխոզի վարչությունը հնարավորություն է ստանում պարզ կերպով հսկել աշխատանքներին:

ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ ՅԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Մեքենա-տրակտորային տնտեսության ոպերատիվ ծախսերը հաշվի առնելիս մեքենաների ամբողջացիան ու վերանորոգումը հաշվի առնել, յեղնելով հետևյալ տվյալներից (մոտավորապես).

	Ամորտիզացիա տոկոսներով	Վերանորոգում տոկոսներով	
Տրակտոր «Ինտերնացիոնալ»	15	15	} Մեքենաների ապահովագրու- թյունը 0,5-ից մինչև 1 տոկոս
Գ. տ. ինվենտարը	10	10	
Ավտոարանսպորտ	20	10	
Կալսելու մեքենան	8	7	

Նորոգման արհեստանոցի ամորտիզացիան սովորաբար հաշվում են նրա կահավորանքի արժեքի 10 տոկոսի չափ:

ԱՌԱՆՁԻՆ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ՄԻ ՇԵԿՏԱՐԻ ՎՐԱ ՄԵՔԵՆԱ-ՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Մի հեկտարի մշակման արժեքը գումարվում է մի հեկտարի վրա ընկնող հետևյալ ծախսերից. ամորտիզացիայից, նորոգումից, վառելանյութի և յուղանյութի արժեքից, ինվենտարի ապահովագրությունից, զբոյցիցրած կապիտալի տոկոսներից, տնտեսության ընդհանուր ծախսերի բաժնից և տրակտորների վաստակից:

Յեղնելով այս տվյալներից, միշտ ել կարելի է հաշվել այս կամ այն դաշտային աշխատանքի արժեքը, վերահաշվելով այն մի հեկտարի վրա:

Ագրոնոմ Ֆ. Յա. Կազլովը հաշվել է գտել է, վոր Սալսկի շրջանում «Սալսկի Խլերարոր» կոլխոզում «Ինտերնացիոնալ» տրակտորով աշխատելիս 1 հեկտարի վրա կատարված դաշտային աշխատանքները հետևյալ արժեքն են ունեցել.

Անմշակ հողի հերկումը—8 ուրլի 94 կոպ., փխրուն հողի հերկումը—6 ո. 86 կոպ., անմշակ հողերի ցաքանիլը (дискование) 4 կազ-

մանոց զիսկավոր ցաքանով—3 ո. 15 կոպ., փխրուն հողի ցաքանումը
«Զիգ-դագ» ցաքանի 16 ողակների կցումով—2 ո., 23 շարքանի
տրակտորին կցվող շարքացանով ցանելը—2 ո. 34 կոպ., տրակտորին
կցվող խուրձկապով հնձելը—3 ո. 80 կոպ., իրար կցած ձիու 2 խուրձ-
կապներով հնձելը—3 ո. 35 կոպ., տրակտ. կցած 3 հնձելու մեքենանե-
րով հնձելը—2 ո. 30 կոպ., արոտների (բնական) հունձը տրակտորին
կցած 3 հնձելու մեքենաներով—1 ո. 80 կոպ.:



ՀՀ Ազգային գրադարան



NL0210149

ԳԻՆՆ Ե 4 ԿՈՊ.

623